ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 (7)

ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան 12 փետրվարի 2019թ.

Ժամը 17[00]

Մասնակիցներ

Հ. Այվազյան -ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա.Բաբայան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ա.Ասատրյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Թ. Ավակյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

Բացակայում էին

Ա.Հարությունյան - ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Ա.Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ներկա էին

Ալ.Շագաֆյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար

Ա. Գևորգյան - Կառավարման խորհրդի քարտուղար

Հրավիրվածներ

Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Զ.Միքայելյան - ՀՀ ԿՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ

Լ. Մաթևոսյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության քննարկում:

Հարց 2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականին ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ստուգման և ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվության քննարկում:

Հարց 3. ՀՀ կրթության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիայի քննարկում:

Ընթացիկ հարցեր:

Նիստը վարում էր կառավարման խորհրդի անդամ՝ **Հ. Այվազյանը** (կառավարման խորհրդի նախագահի հանձնարարությամբ)

Հ. Այվազյանը հարցրեց՝ նախորդ նիստում տրվել են արդյո՞ք հանձնարարականներ այս նիստին ներկայացնելու համար:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ չեն եղել:

Նախագահողն առաջարկեց մարմնի ղեկավար **Ալ. Շագաֆյանին** ներկայացնել օրակարգային հարցերը:

Ալ. Շագաֆյանը տեղեկացրեց, որ օրակարգում քննարկման է ներկայացվել 3 հարց:

<u>Օրակարգի առաջին հարցով</u> Ալ. Շագաֆյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը, նշելով որ հաշվետվության մեջ ներառված են կատարված պլանային և արտապլանային աշխատանքները և որ ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքներն ուղարկվել են համապատասխանաբար ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետներին, ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին: Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու ուղղությամբ ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են հանձնարարականներ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Տեսչական մարմինը նշված ժամանակահատվածում զբաղվել է նաև բազմաթիվ դիմում-

բողոքների ուսումնասիրությամբ, ինչպես նաև իրականացրել աշխատանքներ կրթության ոլորտում ռիսկերի կառավարման, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման, կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Հաշվետվության մեջ անդրադարձ է արված նաև որակի բաժնի կողմից կատարված աշխատանքներին, ինչպես նաև ներկայացված են առաջարկներ, որոնք վերաբերում են ընթացիկ տարվա ստուգումներին:

Ընթացք է տրվել խորհրդի նախորդ նիստի ժամանակ արված առաջարկին՝ սկսվել են աշխատանքներ որոշ իրավական ակտերում փոփոխությունների կատարման ուղղությամբ, մասնավորապես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի վերաբերյալ՝ դիտարկել բազմամասնագիտական ծրագրերը և այն ներդնել մանկավարժական բուհերում: Սա արվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հեռավոր, սահմանամերձ (և ոչ միայն) շրջանների դպրոցներում համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչների թվաքանակը աննախադեպ նվազել է և այդ պատճառով առանձին առարկաներ տարիներով չեն դասավանդվում կամ դասավանդվում են ոչ մասնագետների կողմից, ինչպես նաև ընդգծվել է ներառական կրթության (նաև՝ տնային ուսուցման) արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը, այն է՝ ներմուծել հիմնական դպրոցի (կամ՝ I-VII դասարանների) «բազմամասնագետ» կամ «ունիվերսալ» ուսուցչի (մի քանի առարկաների մասնագետի) անհրաժեշտության գաղափարը: Բազմամասնագետ ուսուցչի պատրաստմամբ կլուծվի նաև առանձին առարկաների ուսուցիչների թերբեռնվածության խնդիրը, հատկապես փոքր դպրոցներում, որոնք ունեն ուսուցիչների չբավարարված պահանջարկ:

Հ. Այվազյանը ամփոփելով **Ա. Բախշյանի** մտահոգությունը, նաև լսելով տեսչական մարմնի ՌԳՍՎ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ Զ. Միքայելյանի բացատրությունը՝ թիվ 13 և թիվ 14 հատուկ դպրոցներում արված ստուգումների ու ռիսկայնության գնահատման վերաբերյալ, առաջարկեց հարկ եղած դեպքում նշված ռիսկերը բացառելու համար ձեռնարկել առանձին ստուգումներ, գործողություններ:

Ա. Բախշյանը երկու հարց հնչեցրեց՝

1.Պետք է բավարարվե՞նք և վե՞րջ- հարցը վերաբերում էր ՀՀ Վայոց ձորի մարզում մարզպետի կողմից օրենքի կոպիտ խախտումներ թույլ տված դպրոցների տնօրենների նկատմամբ կիրառված ընդամենը դիտողությունով:

2. Սովորողների սահմանային տեղերը խախտվել են, ի՞նչ առաջարկներ է արել տեսչական մարմինը առողջապահության նախարարությանը:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ համաձայն սահմանված կարգի՝ խախտումներ կատարած տնօրեններին տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ և այդ մասին տեղեկացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետը՝ առաջարկելով նաև խախտումը կատարած դպրոցների տնօրեններին ենթարկել համապատասխան կարգապահական տույժերի:

2-րդ հարցի հետ կապված ասվեց, որ բազմիցս անրադարձ է եղել է այդ հարցին, սակայն անարդյունք: Ընդունելով **Ա. Բախշյանի** առաջարկը, որոշում կայացվեց խնդրի մասին տեղեկացնել նաև առողջապահության նախարարությանը:

Հ. Այվազյանը առաջարկեց հաշվետվության վերջին հատվածում 3 հարց ավելացնել ռեզյումեի տեսքով՝ 1-ինը՝ նորմերի հակասությունը, որը ըստ էության ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության նպատակի իրականացում է, 2-րդ՝ մարզպետների կողմից տրված և կիրառված պատժամիջոցների անհամաչափությունը տնօրենների կողմից թույլ տված խախտումների նկատմամբ և 3-րդ՝ խախտումների հետևանքների վերահսկողությանն ուղղված գործողություններում անհետևողականությունը:

Խորհրդի մյուս անդամներին առաջարկվեց՝ եթե կան այլ առաջարկներ ևս, ապա դրանք նույնպես ներառել:

Ապա անդրադարձ եղավ մասնավորապես Վայոց ձորում արձանագրված առարկայական ստուգումների բավականին ցածր ցուցանիշներին. արդյո՞ք ում մեղավորությունն է, որ սովորողների հիմնական գիտելիքները մայրենի լեզվից, մաթեմատիկայից ու ռուսերենից այդքան մեծ բացասական ցուցանիշներ ունեն: Ի վերջո, կրթության ուղղակի արդյունքը աշակերտի մնացորդային գիտելիքն է:

Խորհրդի նիստը նախագահող Հ. Այվազյանը առաջարկեց՝ ըստ իրենց կողմից ներկայացված գործունեության հաշվետվության ֆորմալ ձևի, ընդունելով հանդերձ 2018թ. հաշվետվությունը, վերջին հատվածում ավելացնել նաև **առկա վիճակի վերաբերյալ վերլուծություն:**

<u>Օրակարգի երկրորդ հարցով</u> **Ալ. Շագաֆյանը** ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականին ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ստուգման և ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությունը: Հակիրճ ասվեց, որ ՀՀ

կրթության տեսչական մարմինը 2018 թվականին ստացել է 354 դիմում-բողոք (ներառյալ թեժ գիծը), նախորդ՝ 2014-ից 2017թթ.՝ մոտ 250 դիմումի համեմատությամբ 100-ով ավել: Դիմումներում առավել հաճախ բարձրացված հարցերը վերաբերում են տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին, ուսումնական հաստատություններում իրականացվող դրամահավաքությանը, գործատու-աշխատող փոխհարաբերություններին, դպրոցում տիրող անառողջ մթնոլորտին:

Քննարկվեց, թե այդուհանդերձ՝ ինչ ենք հասկանում «դրամահավաքություն» ասելով. որ դեպքերում դրանք կարելի է համարել դրամահավաքություն: Ալ Շագաֆյանը պատասխանեց, որ այդ հարցին պարբերաբար անդրադարձել է և տեսչական մարմինը և ՀՀ ԿԳ նախարարությունը, այն է՝ երբ աշակերտից կամ ծնողից գումար են պահանջում պարտադրանքով ու առանց հաշվետվողականության:

Անահիտ Բախշյանի կարծիքով, շատ դեպքերում տնօրենը կամ ուսուցիչը ուղղակի ստիպված է, ասենք գրավոր աշխատանքի կազմակերպման կամ սովորական հանձնարարություն տպելու համար սովորողներից գումար հավաքել, քանի որ այդ նպատակի համար դպրոցն իր աշակերտ-թվով ֆինանսավորման պարագայում հատկացումներ չունի:

Դիմումներում բարձրացված հարցերի մեջ մեծ է նաև դպրոցի անառողջ մթնոլորտի, տնօրեն-աշխատող հարաբերություններում իրավական, աշխատանքային հարցերի պարզաբանումների խնդրանքը:

Տիկին Բախշյանը խնդրեց պարզաբանել, թե ինչու տեսուչները չեն կարողանում օգնել այն ուսուցիչներին, ովքեր խնդիրներ ունեն տնօրենների հետ, անգամ իրենց աշխատանքային պայմանագրերն ունենալու մասով, իսկ այդպիսի դեպքերը շատ են, օրինակ՝ Գյումրու թիվ 37 դպրոցում:

Ի պատասխան՝ տեսչական մարմնի ղեկավար **Ալ. Շագաֆյանը** պատասխանեց, որ այդ դաշտում կրթության տեսչական մարմինն անելիք չունի, դրանք աշխատանքային հարցեր են, որոնք ենթակա են վիճարկման միայն դատարանում:

Հարցի վերաբերյալ տեսակետ հայտնեց նաև **Հ. Այվազյանը**, որ իր կարծիքով, տեսչությունը չի կարող միջամտել ուսուցչի աշխատանքային իրավունքի վերականգմանը, եթե ուսուցիչը չի կարող տնօրենից իր աշխատանքային պայմանագիրը պահանջել ու ստանալ, ինչպե՞ս կարելի է նրան վստահել մեր սերնդի կրթություն տալու գործը:

Օրակարգի երրորդ հարցով Լ. Մաթևոսյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Քանի որ այն ավելի մանրամասն ուսումնասիրելու ու կարևորություն ներկայացող փաստաթուղթ է, որոշվեց, որ կատարված հղկումներով ու առաջարկների ներառմամբ ընդունել որպես հիմնական փաստաթուղթ՝ չբացառալով հետագայում էլ որոշակի լրացումներ ու շտկումներ անելու հնարավորությունը:

Շեշտվեց, որ որակի ապահովման բաժինը առանձին կառուցվածք է տեսչական մարմնում, որը տեսչական մարմնի ղեկավարի ենթակայությամբ չի գործում, այլ հաշվետու է կառավարման խորհրդին:

Քննարկման ընթացքում հնչեցին նաև առանձին կարծիքներ և մեկնաբանություններ:

Ամփոփելով նիստը՝ Հ. Այվազյանը քննարկված հարցերը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշեց՝

1. **Հավանություն տալ** ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությանը:
2. **Հավանություն տալ** ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականին ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ստուգման և ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությանը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ

Հ. Այվազյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ա. Բաբայան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Ասատրյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Թումո» սեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավակյան

ՀՀ ԿԳՆ ԿՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ, խորհրդի քարտուղար

Ա.Գևորգյան